ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

..... 2010թ. N.....Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑՆ ԱԲՈՎՅԱՆ ՊՈՒՐԱԿԻՆ ՄԻԱՑՆՈՂ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Երևանի Տերյան փողոցն Աբովյան պուրակին միացնող փողոցն անվանակոչել Լիբանանի Հանրապետության նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑՆ ԱԲՈՎՅԱՆ ՊՈՒՐԱԿԻՆ ՄԻԱՑՆՈՂ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունմամբ հարգանքի տուրք է մատուցվում 2005 թվականի փետրվարի 14-ին ահաբեկչության զոհ դարձած Լիբանանի Հանրապետության նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի հիշատակին, որն առանձնահատուկ համակրանք է ունեցել հայ ժողովրդի հանդեպ:

Ռաֆիկ Հարիրին խոշոր դերակատարում է ունեցել տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտակրթական և մի շարք այլ բնագավառներում հայ-լիբանանյան համագործակցության զարգացման, ինչպես նաև երկու երկրների միջև առկա բարեկամական սերտ հարաբերությունների խորացման գործում:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑՆ ԱԲՈՎՅԱՆ ՊՈՒՐԱԿԻՆ ՄԻԱՑՆՈՂ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Տերյան փողոցն Աբովյան պուրակին միացնող փողոցն անվանակոչելու մասին» որոշման ընդունման առնչությամբ Երևանի ավագանու այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ